

Պաշտոնական ընդդիմախոսի գրախոսական

Արման Դերստեփանյանի (Ստեփանյան) «Ընդհանրացված գրավիտացիայի տեսության հետազոտություն» ատենախոսության ներկայացված «Տեսական ֆիզիկա» մասնագիտությամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Հարաբերականության ընդհանուր տեսության ընդհանրացումները դարձել են տեսական հետազոտությունների կարևոր բնագավառ մութ էներգիայի և մութ նյութի վերաբերյալ դիտողական վկայությունների հետ կապված: Ներկայումս դիտողական և փորձարարական գործուն հետազոտություններ են ընթանում գրավիտացիայի ընդհանրացված տեսությունների ստուգման համար: Տվյալ ատենախոսության թեման գտնվում է այդ հետազոտությունների համատեքստում, հետևաբար, անկասկած կարևոր է, հատկապես քանի որ առաջարկում է նաև դիտողական ստուգման հնարավորություններ:

Թույլ դաշտի մոտավորությամբ ատենախոսությունում հետազոտվում է Հարաբերականության ընդհանուր տեսության ընդհանրացում, որ ներառում է կոսմոլոգիական հաստատունը: Տրված է այդ ընդհանրացման ներկայացում խմբերի տեսության շրջանակում: Բարձր չափողականության տարածությունների հետազոտմամբ ցույց է տրված, որ կոսմոլոգիական հաստատունը կարող է դիտվել, որպես գրավիտացիայի երկրորդ հաստատուն, ինչը ունի կոսմոլոգիական մոդելների համար ուղղակի կիրառություն:

Գրավիտացիոն ոսպնյակի երևույթը, ինչպես ցույց է տրված, հանդիսանում է քննարկվող ընդհանրացված տեսության համար հստակ փորձաքար, ավելին, արտածված է համապատասխան բնութագրիչի կրիտիկական արժեքը, որը կարող է հասանելի լինել առաջիկա դիտումներում: Կոսմոլոգիական հաստատունը քննարկվող մոտեցման շրջանակում արտածված է գալակտիկաների համակարգերի դինամիկայի դիտողական տվյալներից: Հետաքրքիր է երկրաչափական մեթոդների կիրառությամբ գալակտիկաների համակարգերի դինամիկական անկայունության հետազոտությունը՝ թվային փորձերի միջոցով:


Ընդհանրապես, այս ատենախոսությունում կարևոր են համարում տեսական արտածումների արդյունքները մինչև դիտողական տվյալները հասցնելը և կատարված մանրակրկիտ համեմատումը, ինչը պահանջում է զգալի բազմաշերտ աշխատանք:

Ես առիթ եմ ունեցել լսելու Արման Ստեփանյանի հետաքրքիր ելույթները Ս.Մատինյանին նվիրված 2019 և 2020 թթ. սեմինարների ժամանակ և մասնակցելու դրանց մանրամասն քննարկմանը, և կարող եմ ասել, որ բարձր եմ գնահատում կատարված հետազոտությունները:

Ատենախոսության արդյունքները հրատարակված են 8 հոդվածներում՝ բոլորը վարկանիշային ամսագրերում: Ամփոփագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:


Այս ատենախոսությունը լիովին համապատասխանում է 'տեսական ֆիզիկա' մասնագիտացմամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման պահանջներին և հեղինակը՝ Արման Ստեփանյանը անկասկած արժանի է այդ գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս



Արա Սեդրակյան

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ստորագրությունը հաստատում եմ՝
Անձնակազմի կառավարման բաժնի ղեկավար՝  L.Ս.Միքայելյան

